

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1894 ԹԻՎԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԿԷՍՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԿՍՎԱԾ Է

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ 10 ռ., տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ»-ին կարելի է ԽՄԲԱԳՐԱԿԱՆՈՐԴ Օտարադպարացիք պէտք է դիմեն հետևեալ հասցեով՝ Тифлисъ. Редакція «Мшакъ», իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համակրելի հրաւեր. Այսպէս չէ կարելի շարունակել. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խմբագրութեան կողմից. Տնտեսական բարեփոխութիւններ էջ միայնում. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յունաստան. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ. ԼՈՒՐԵՐ. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՄԱԿՐԵԼԻ ՀՐԱՒԵՐ

Մենք արդէն ասեցինք, որ բարձր կառավարութիւնը, արդարադատութեան միջնորդը, հրաւեր է կարգում հասարակութեան և մամուլին՝ մասնակցել դատաստանական օրէնքների վերաքննութեան գործում:

Այդ հրաւերը մի նշանակւոր երեւոյթ է կազմում, և հասարակութեան ու մամուլի պարտաւորութիւնն է ամենալայն կերպով օգուտ քաղել այդ հրաւերից:

Այդ հրաւերով հասարակութեանը միջոց և հնարաւորութիւն է տրվում մասնակցել մի այնպիսի գործին, ինչպէս է արդարադատութեան գործը, որը շոշափում է ժողովրդի ամենակենսական շահերը և օրից մեծ կախում ունի ամբողջ պետական կենսքի կանոնաւոր ընթացքը:

Լաւ, ինչպցի, արդար և նպատակայարմար օրէնքներ ունենալուց մեծ շահ ունի ինքը ժողովուրդը, որի համար և յօրինվում են այդ օրէնքները: Եւ հէնց այն պատճառով է հրաւիրվում հասարակութիւնը՝ մասնակցել գործին, որպէս զի նրա համար հրատարակելի օրէնքը չէ լինի կարելի է տալիս աշխատութեան արդիւնք, վերացական դատողութիւնների հետեւանք, այլ կապված լինի իրական կենսքի հետ:

Մենք արդէն մի անգամ տոյժ ունեցանք ասելու, որ դատաստանական ընթացքների ժամանակ միջնորդութիւնը խոստացել է պահպանել 1864 թվ. օրէնսդրութեան հիմնական սկզբունքները. այդ օրէնքները իրանց գործադրութեան և մանրամասնութիւնները մէջ միայն ենթարկվելու են նըշանաւոր փոփոխութիւնների և յարմարեցնվելու են այն բոլոր պահանջներին, որ արտայայտել են 30-ամեայ պրակտիկան և կենսքի փորձը:

Եւ հաճախ այդտեղ է հարկաւոր հասարակութեան և մամուլի լուրջ աջակցութիւնը: Յայտնի իրողութիւն է, որ ամենալաւ և ամենակենսական օրէնքները շատ անգամ մնում են մեռած տառ և բացասական արդիւնք են արտադրում, երբ նրանք գործադրվում են առանց ի նկատի ունենալու երկրի ցեղական, տնտեսական, կուլտուրական և այլ պայմանները, երբ

նրանք գործադրվում են ժողովրդի անհատական և բոլորովին խորթ միջոցներով, երբ անտես են առնվում այդ ժողովրդի անցեալը, նրա աշխարհայեցողութիւնը և այլն:

Այնքանազար Բ. Կայսրի շնորհած օրէնքները աւելի առաջադիմական մտքերի և եւրոպական քաղաքակրթութեան արդիւնք էին համարում, քան թէ Ռուսաստանի ազգայնականութեան կենսքի, պայմանների և ուսումնասիրութեան հետեւանք: Այդ պատճառաւորութեամբ, այդ օրէնքները շատ անգամ մոռցվել են զանազան սահմանափակումներով և փոփոխութիւններով, ինչպէս, ի միջի այլոց, և Կովկասում, իսկ շատ անգամ բոլորովին չեն մոռցվել:

Բոլոր քաղաքակրթ ազգերի մէջ, օրէնսդրութեան զլխաւոր հիմունքները, որոնք բխում են արդարադատութեան և ճշմարտութեան ընդհանուր գաղափարներից, միատեսակ են, բայց խնդիրը այդ օրէնքի նպատակայարմար գործադրութեան մէջն է:

Թէ որքան նպատակայարմար են այդ սահմանափակումները, զանազան փոփոխութիւնները, թէ կենսքի պրակտիկայի մէջ ինչ անյարմարութիւնների, արգելքների են հանդիպել այդ օրէնքների այս և այն կետերը, թէ այն օրէնքները, որոնք արդէն հնացած են, որքան են համադարձաբանում կենսքի պահանջներին և արդարադատութեան գաղափարին, թէ ինչ բարեբար կամ վնասակար ազդեցութիւն են ունեցել այդ օրէնքները Ռուսաստանի բազմալեզու և բազմազգ ազգութիւնների բարոյականութեան, աշխարհայեցողութեան վրա, թէ ինչ յարաբերութիւններ են ստեղծել նրանք զանազան ժողովուրդների և զանազան դասակարգերի մէջ, թէ որքան աւելի կամ նուազել է քրէական յանցանքների և ռմիւրների թիւը. — հաճաքեց, որոնց պարզաբանութիւնը ազգին ազդեցութիւն կարող է ունենալ ապագայ օրէնսդրութեան վրա:

Կայսրութեան բոլոր միւս երկրների հետ միասին մեր բազմազգ և բազմալեզու Կովկասը ևս հրաւիրված է մասնակցել դատաստանական օրէնքների վերաքննութեան գործին:

Եւ տեղեկութիւնների, դիտողութիւնների ո՞րքան առատ պաշար կարող են ունենալ Կովկասի դատաստանական գործիչները, որոնցից շատերը նոյն իսկ նոր օրէնքները մտցնելու օրից ծառայել են: Գանի քանի երկրասարդ իրաւաբաններ ունենք, որոնք կատարել են և քննիչի և հաշտարար դատաւորի, և փաստաբանի պաշտօններ, տարիներով ապրել են բուն ժողովրդի մէջ, չվիզել են նրա հետ, մօտիկ ծանօթ են նրա աշխարհայեցողութեան, այն պայմաններին, որոնց մէջ գործադրվել են օրէնքները, գիտեն այն խոչընդոտները, որոնք արդիւնք են կանոնաւոր դատաւարութիւնը և չեն թոյլ տուել արդարութեանը կատարել իր գործը:

Ո՞րքան նպատակայարմար է, ի՞նչ օգուտներ կարող է ունենալ երդուեալ դատաւորների մտցնելը Կովկասում, ի՞նչ չարիքներ են առաջ գալիս, երբ դատաւորները ծանօթ չեն տեղական լեզուներին և վարում են դատաստանը տգէտ թարգմանների միջոցով. ինչ է պատճառը, որ Կովկասում այնքան հրէշաւոր կերպով զարգացած է սուտ երդում ուտելու մանաւանդ թուրքերի մէջ. օրէնքի ո՞ր ձեւակալման թիւնները ծնունդ են ժողովուրդը ինչ պայմաններ արդեք են լինում արդարադատութեան զարգացման, — հաճախ կենսական հարցեր, որ շատ լաւ կարող էին լուսաբանել մեր երկրի գործիչները, մանաւանդ մեր իրաւաբանները, որոնք զեռ

պահպանել են ժողովրդի օգտին ծառայելու գաղափարը, եթէ նրանք լուրջ կերպով ուսումնասիրեն այդ խնդիրները:

Միջնորդութիւնը հրաւիրում է բոլոր ձեռնհաս անձանց յայտնել իրանց կարծիքները և հայեացքները՝ մեր դատաստանական օրէնքների և կարգերի մասին:

Արձագանք տալ այդ հրաւերին, — մեր երկրի իրաւաբանների և դատաստանական գործիչների սրբազան պարտականութիւնն է: Մանաւանդ տեղացիները, հայ, վրացի և նոյն իսկ թուրք իրաւաբանները և դատաստանական գործիչները, որոնք անմիջական ծանօթութիւն ունեն տեղական ժողովրդի հետ, և շատ լաւ գիտեն ժողովրդի ունեցող դատաստանական օրէնքների լաւ և թոյլ կողմերը, — մեծ ծառայութիւն կարող են անել հարցի հիմնաւոր մշակութեանը իրանց կարծիքներով, դիտողութիւններով, և փորձական ծանօթութեամբ:

Մշակի՝ էջերը բաց են այդ կարեւոր հարցի ուսումնասիրութեան համար, և մենք ուրախութեամբ կը տպագրենք այն բոլոր կարծիքները և նկատողութիւնները, որոնք կարող են նպաստել այն կարեւոր հարցի լուսաբանութեանը, ինչպիսին է դատաստանական ընթացքների խնդիրը, մեր երկրի վերաբերութեամբ:

ԱՅԳՊԵՍ ԶԵ ԿԱՐԵԼԻ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ

Ներսիսեան դպրոցի հին հոգաբարձութիւնը հեռացաւ պաշտօնից, և նոր հոգաբարձութիւնը պաշտօնի մէջ մտաւ սակայն ոչ հին հոգաբարձութիւնը զիտէ, թէ ինչ դրուեալն մէջ է յանձնում դպրոցը նորին, և ոչ նորը միջոց ունի իմանալու, թէ ինչ վիճակի մէջ է ստանում դպրոցը հինից:

Եթէ օրինակ, նոր հոգաբարձութիւնը հարցնէր, թէ հին հոգաբարձութիւնը ի՞նչքան դրամ ստացան, ի՞նչպէս են պահված հաշիւները, ի՞նչ կարուածքներ կան և ինչ վիճակի մէջ են, — մի խօսքով ինչ պատկեր է ներկայացնում դպրոցի տնտեսական և ուսումնական մասը, — ոչինչ որոշ պատասխան չէք ստանալ:

Եւ դա պատահական, մասնաւոր երեւոյթ է: Մեր բոլոր դպրոցները, թէ օրիորդական, թէ տղայոց, թէ թեմական, թէ ծրարական, նոյն վիճակի մէջ են, նոյն անհաշիւ, անորոշ, անկանոն դրութեան մէջ:

Հոգաբարձութիւնները, որոնք թէ տնտեսական և թէ ուսումնական մասի կառավարիչները և պատասխանատու մարմիններն են, գալիս և գնում են, միմեանց յարգողութեամբ, առանց որ հին նորին տեղ տալիս նրան հաշիւ տալ, առանց որ նորը հինին յարգելիս՝ նրանից հաշիւ ստանալ, անմիջական չեն նրանից տանի դպրոցը, իր բոլոր եկամուտներով և գործերով:

Ընդհանրապէս, հին հոգաբարձութիւնը հեռանում է դպրոցից, առանց իրան պարտաւոր զգալու երես առ երես կանգնելու նորին հետ, և նրան յանձնելու դպրոցը իր բոլոր գոյքերով, դրամով, գործերով, և նոյն էլ գալիս, մնում է դպրոցը, երբ հին հոգաբարձութիւնը արդէն թողի, հեռացել է, երբ կարծէք տանտէր չը կայ, առանց երես առ երես հինից հաշիւ ստանալու, առանց իմանալու, թէ ինչ է տալիս նա իրան, առանց իմանալու, թէ մէջտեղ ինչ կայ, ինչ չը կայ:

Այդպիսով հին և նոր հոգաբարձութիւններեան են գալիս ոչ թէ իրրեւ մի և նոյն հիմնարկութեան անընդհատ, մէկը միւսին առաջ պատասխանատու, մէկը միւսին շարունակող մարմիններ, այլ միմեանց չը ծանաչող, միմեանց հետ անկապ մարմիններ:

Եւ այդպիսի պայմանների մէջ նոր հո-

գաբարձութեան դրութիւնը, ի հարկէ, անհամեմատ աւելի ծանր, աւելի փափուկ, աւելի պատասխանատու է, քան հին հոգաբարձութեանը: Հինքը թողնում, հեռանում են, իրանք իրանց բոլորովին ազատ են համարում որ և է պատասխանատուութիւնից. նրանց ոչ ոք չէ հարցնում, թէ արդեօք ամեն բան իր տեղն է, թէ ոչ, թէ արդեօք հաշիւները ճիշդ են, թէ ոչ, թէ արդեօք պակաս ոչինչ չը կայ, կամ եթէ պակաս կայ, ով պէտք է լրացնի. — մի խօսքով նրանք զուլս են առնում և գնում, թողնելով իրանց յետնորդներին մաքրելու իրանց հաշիւները, զուլս կոտորելու և իմանալու, թէ ինչ կայ, ինչ չը կայ, ինչն է պակաս և ինչն է կարգին:

Կա մի անտանելի, անհասկանալի դրութիւն է, որը շարունակելի, կը նշանակէ երբեք կարգի տակ չը դնել մեր դպրոցների ներքին վիճակը և հոգաբարձութեան գործունէութիւնը:

Ընդհանրապէս, պէտք է անպատճառ պարտաւորեցնել հին հոգաբարձութեանին, նախ քան պաշտօնից հեռանալու, երես առ երես, կամ իր ներկայացուցիչների միջոցով, յանձնել նոր հոգաբարձութեանին օրինաւոր ցուցակադրութեամբ, օրինաւոր հաշիւով դպրոցի բոլոր գոյքը, հարստութիւնը, ունեցած չունեցածը, մի խօսքով ամբողջ դպրոցի վիճակը, որպէս զի նոր հոգաբարձութիւնն էլ իմանայ, թէ հինից ինչ ստացաւ, և այն րօպէին, երբ նա պաշտօնի մէջ մտաւ, դպրոցը ինչ ունէր և ինչ վիճակի մէջ էր: Հակառակ դեպքում ոչ մի հոգաբարձութիւն իրան իրօք պատասխանատու չէ համարի, և ոչ մի հոգաբարձութիւն չէ կարող ասել, թէ ինքը ինչ արաւ, ինչպէս ստացաւ դպրոցը իր նախորդից, և ինչ վիճակի մէջ յանձնեց իր յետնորդին:

Եղածը եղած է. գէթ այսօր, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան վրա, իբրեւ հայոց ամենամեծ դպրոցի ամենախնտիկընտ հոգաբարձութեան վրա, պարզեց կայ այդ սխտեմը մտցնել, որով շատ նպաստած կը լինի մեր դպրոցների ներքին կանոնի կանոնաւորվելուն:

Այդ սխտեմը լրացնելու և ամենախնտիկ կոնտրոլ մտցնելու համար մնում է էլի մի շատ հեշտ քայլ անել. — այն է կանոն հաստատել, որ նոր հոգաբարձութեանը ընտրելիս, նոյն պատգամաւորները ընտրեն և հաշիւ տեսնեն, ինչպէս լինում է ուրիշ հիմնարկութիւններում, որպէս զի այդ հաշիւ տեսնելը քննեն հին հոգաբարձութեան հաշիւներն ու գործերը և մանրամասն զեկուցում տան նոր հոգաբարձութեան:

Բաւական է մի այդպիսի պարտաւորիչ յօդուած մտցնել թէ Ներսիսեան դպրոցի և թէ բոլոր թեմական դպրոցների և ծրարական ուսումնարանների կանոնադրութեան մէջ, և այն ժամանակ այդ բոլոր հիմնարկութիւններում կը թագաւորի կօստրօլ և փոխադարձ պատասխանատուութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՏ

«Մշակ» բաժանորդների թիւում կան այնպիսիները, որոնք 1893 թվականի համար ուղարկել էին մեզ տարեկան բաժանորդագինը՝ 10 ռուբլի: Բայց որովհետեւ 1893 թվ. «Մշակ» հրատարակվեց միայն երկու ամիս, ուստի դուրս գալով նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների վճարը՝ 2 ռուբլի, մնացած 8 ռուբլի բաժանորդները անցկացրին ներկայ 1894 թվականի հաշին:

Շուտով լրանում է այդ 8 ռուբլի բաժանորդագինի ժամանակը: Ուստի յայտնում ենք,

որ այն բաժանորդները, որոնք կամենում են «Մշակ» ստանալ մինչև ներկայ տարվայ վերջը, թող բարեհաճեն ուղարկել մնացած 2 բուլբուլն մինչև հոկտեմբերի վերջը, հակառակ դեպքում կը դադարեցնենք այդպիսիներին «Մշակ» ուղարկելը:

Ի դեպ, կրկին դիմում ենք մեր այն բաժանորդներին, որոնց վրա ապառիկներ կան, որ բարեհաճեն ամսվապես, ամենաուշը մինչև սեպտեմբերի վերջը, խմբագրությունը հասցնել իրանց վրա մնացած բաժանորդագրին: Հակառակ դեպքում ստիպված կը լինենք դադարեցնել և «Մշակ» չուղարկել այն բաժանորդներին, որոնք յայտնել են, որ չուսում կուղարկեն ապառիկները, բայց մինչև այժմ չեն ուղարկել:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԹՈՒԹՅՆԵՐ ԷԶՄԱՆՆՈՒՄ

Էջմիածնի գործերին մօտիկ ծանօթ ոչ մի անձի համար այժմ այլ ևս զաղարկել չէ, որ Էջմիածնում դրամի կարիք է զգացվում: Նրկու բաժանման մեծածախք շինություններ են շինվում: տեղակալի սկսած բարենորոգումները, որոնք մինչև այժմ կանգ են առել, բնականաբար պետք է շարունակվեն և վերջացնել: կան բազմաթիվ հին շինություններ, որոնք պետք է քանդվեն և նրանց տեղը ըստ յարմարության նորերը շինվեն: բացի դրանից վանքի «սլան» կոչված տնտեսատունը կարօտ է անյապող բարեփոխության: նոյնը Ներսիսեան անտառում, որի անխնամ դրությունն նկարագրվող կար «Մշակի» մէջ: նոյնպէս և Էջմիածնի ընդարձակ հողերը չհասցործելու համար, ջուր բերելու հոգս պետք է քաշել, — մի խօսքով՝ մի շարք բարեփոխումներ անհրաժեշտ կարիք է զգացվում և դրանց հետ սերտ կապված են մեծաքանակ ծախքեր, իսկ Էջմիածնում դանդաղում են, որ դրամ չը կայ...

Չը գիտենք, արդեօք վերս յուշած բարեփոխությունները տեղի կունենան, թէ ամեն ինչ դարձեալ նոյն անսխիւթ դրութեան մէջ կը մնայ՝ սկսածը կիսատ, չինածի մի մասը՝ քանգած, խարխուլ՝ քիչ ժամանակից բոլորովին քանդվելու վիճակին թողած: — սակայն այսքանը պարզ է, որ անպայման անհրաժեշտութիւն է զգացվում բազմաթիվ հիմնաւոր բարենորոգումներին, վերաշինութիւններին:

Այսպիսի մի ծանր ժամանակ, երբ բոլորը զանգաղում են փողի պակասութիւնից, բոլոր զանգաղողներն էլ համոզված են, որ Էջմիածնի ունի հաստատուն միջոցներ, եթէ ոչ մի տարում, դոնէ մի քանի տարիներ ընթացքում բարեբեկ իր նիւթական և տնտեսական դրութիւնը, կանոնադրելով Էջմիածնապատկան կալուածները և նրանցից ստացած եկամուտները:

Մի քանի լրագրիներում կարդացինք թէ «պըլանը» կառավարելու համար գիւղատնտես և հըրաւիրված, թէ անտառի վերահսկողութիւնը մի անտառապահի է յանձնված, թէ ճեմարանում գիւղատնտեսական դասեր են մտցրված, թէ Էջմիածնի ամենամեծ կալուածները մէկի՝ Բլնի գիւղի կառավարութիւնը նոյնպէս մէկ գիւղատնտեսի վերատեսչութեան տակն է, թէ մէկ մասնազտ գինեգործ է հրաւիրված, թէ... և այլն և այլն, մի խօսքով այն բոլորից, ինչ որ մի քանի լրագրիներում գրվեցին, կարելի էր այն միջոցառական եղանակաբանքը դալ, թէ Էջմիածնի վերջապէս սկսել է իր տնտեսական և կալուածական անխնամ դրութեան վրա լուրջ ուղղորդութիւն դարձնել:

Սակայն ինչ կաթէ, քր պատահմամբ Էջմիածին գալով, երբ հետաքրքրութեամբ տեղեկութիւններ էինք ժողովում Էջմիածնում եղած այդ փոփոխությունները մասին, մեզ ասացին, որ այդ բոլոր ուղղափառութիւնը գործերը դոյութիւն են ունեցել միմիայն լրագրիների մէջ, իսկ իրողութիւնը այն է, որ այժմ ոչ «պըլանում» գիւղատնտես կայ, ոչ գիւղատնտեսական դասեր ճեմարանում, ոչ գինեգործ, ոչ Բլնիում մասնազտ կառավարիչ և ոչ էլ անտառի անտառապահ: այո, մի բոլոր չըմանում կայ այդ բոլորը, բայց թէ ինչ եղան դրանք, ուր մնաց այդեղործը, ինչու այլ ևս բան չէ անվում, դրանք մասին ոչ մի բան չէ լսվում: փաստը սակայն այս է, որ դրանցից իրապէս և ոչ մէկը կայ...

Մեռած տառ: մնացին տնտեսական վերանորոգությունները, և մեր բոլոր յոյսերը՝ Էջմիածնում

տեղի ունեցող կալուածատնտեսական բարեփոխություն մասին, ի դերն ելան, մեզ մի անգամ ևս համոզելով, թէ քանի որ Էջմիածնում ամեն ինչ կիսատ — պակաս կը սկսվի, այնտեղ ոչ մի գործ էլ առաջ չէ կարող և ուրեմն միշտ կարիք կը մնայ՝ կարիք, ցանկութիւնը ձայն բարձր յանապատի:

Ս — ման

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Պետերբուրգ, օգոստոսի 22-ին
«Մշակի» ներկայ տարվայ № 91-ում գետեղված էր մի լուր կարսից, որ իբր «Արաքսի» վերջին գրքերը ուղարկված չեն եղել իր ժամանակին կարսի բաժանորդներին, այն ինչ բոլոր գրքերը միասին պատուիրած կերպով ուղարկված են եղել յունիսի 1-ին՝ աւելի դիւրութեան և կանոնադրութեան համար՝ մեր գործակալ կարապետ Յովհաննիսեանին՝ բաժանորդներին յանձնելու նպատակով: Տարածաշրջանի պատճառը եղել է այն դէպքը, որ պ. Յովհաննիսեան կարսից տեղագիրով լինելով Քիշնև, գրքերը կարսից պատուիրակարութիւնը դարձրել է Քիշնև, որպէս ապացուցանում է պ. Յովհաննիսեանին նամակը, որ կցում ենք ներկայ գրութեանը: Գրքերը Քիշնևից իր ժամանակին ուղարկվել են կարս՝ բաժանորդներին յանձնելու համար, որ, ի հարկէ, վաղուց արդէն ստացած կը լինեն:

Խնդրում ենք, իրողութիւնը պարզելու և տարակուսելով բաժանորդներին միամտացնելու համար՝ զետեղել այս երկտողը «Մշակի» առաջին կայ համարներից մէկի մէջ:

Ս. Գիւլամիրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսից մեզ գրում են, օգոստոսի 25-ից, «Վերջին մայրիկներն կը տեղեկանանք, թէ Մուշի մէջ ապստամբութիւն ելած է. սակաւթիւ զորքեր, որ կը գտնուէին քաղաքին մէջ, ջարդված են»:

Օգոստոսի 31-ին, չորեքշաբթի երեկոյեան, Ներսիսեան դպրոցի նոր հողաբարձութիւնը առաջին անգամ նիստ ունեցաւ՝ Ներկայ էին բոլոր հողաբարձուները, բացի մէկից, որը քաղաքից բացակայ լինելու պատճառով, ներկայ էին կարգապետ կաթողիկոսական կոնդակը, որով հողաբարձութիւնը հաստատվում է իր պաշտօնի մէջ: Այդ նիստին հողաբարձութիւնը ընտրեց երեք հոգուց բաղկացած մի մասնաժողով, որը պէտք է քննի և զեկուցում ներկայացնի ժողովին՝ դպրոցի տնտեսական վիճակի մասին: Ժողովը ցանկացաւ ձեռնարկել մի քանի պաշտօնեաների ընտրութեան, ինչպէս տեսուչ կամ տեսչի պաշտօնակատար, պակաս ուսուցիչներ և վերակացու: Սակայն նախագահը, Սուրենեան եպիսկոպոսը, յայտնեց, որ պէտք է յետաձգել այդ ընտրութիւնները: Այդպէս էլ եղաւ:

Մենք անցեալ անգամ հաղորդեցինք, որ Նախագետեան վարչապետը հեռագրել է Էջմիածնից թիֆլիսի առաջնորդին, որ յետաձգվի Ներսիսեան դպրոցի տեսչի և ուսուցիչների ընտրութիւնը, մինչև որ ինքը կը բերի կաթողիկոսական նոր կարգադրութիւնը: Այժմ, ինչպէս հաստատ աղբիւրից տեղեկացանք, այդ վարչապետը թիֆլիսէլով, յանձնել է առաջնորդին կաթողիկոսական մի գրութիւն, Ներսիսեան դպրոցի հողաբարձութեան անունով: Իր այդ գրութեամբ, որը ոչ-պաշտօնական բնուորութիւն ունի, վերաբերում առաջարկում է Ներսիսեան դպրոցի հողաբարձութեան՝ տեսուչ ընտրել Սեդրակ Մանուկեանին: Այդ առիթով հողաբարձութիւնը, երէկ երկօրյան, սեպտեմբերի 2-ին, հրաւիրված էր արտակարգ ժողովի:

Երևանի նահանգապետ Ֆրէդէ հրատարակեց մի շրջաբերական, որի նպատակն է թոյլ չը տալ գիւղացիներին, որ հողերը յանձնեն վախճառներին և դրամատերերի ձեռքը:

Պետերբուրգից հեռագրում են, որ կառավարչական շրջանում հարց է յարուցված այլ ևս թոյլ չը տալ օտարազգատակներին գաղթականութիւններ հիմնել կովկասում:

Տեղական ուսու լրագրիները հետեւեալ հեռագրի են ստացել Պետերբուրգից. «Շքանշաններ են նորհւած՝ Վաղիմիր երկրորդ աստիճանի—թիֆլիսի կաղէտների դպրոցի դիրեկտոր գեներալ Օստրոգորսկուն. ս. Աննայի առաջին աստիճանի—կովկասեան ցէնզուրական կոմիտեի նախագահ Գակկէլին. ս. Ստանիսլավի առաջին աստիճանի—կովկասեան շտաբի գլխաւոր գեներալ Մարկովին և զինուորական դատաւոր Անտուշէվիչին. ս. Աննայի երկրորդ աստիճանի—գլխաւորական դատաւոր Գեդապետ Վալիովին և Սիւնախի գաւառապետ Շանչիկին. ս. Վաղիմիրի երրորդ աստիճանի—կովկասի քաղաքացիական վարչութեան բժշկական մասի կառավարիչ Գալվաշ-կուն և նոյն վարչութեան անդամ Ումստային. ս. Աննայի երկրորդ աստիճանի—ցէնզուրական կոմիտեի քարտուղար Մէլք-Նուբարովին. ս. Աննայի երրորդ աստիճանի—կուրգէնշտերն և Բաբանասեանց բժիշկներին, գրաքննիչ կարախանովին և նահանգական վարչութեան քարտուղար Չաթալ-բաշիկին»:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց Վաշինգտոն իրլինգի «Սերոյ Ուլտաւոր» անունով գրքի թարգմանութիւնը, որ կատարել է Յ. Յոջամիրեան և տպվել է Բագու, Շահբաղեանի տպարանում: Գա մի արեւելեան դրոյց է, որի նպատակն է ապացուցանել, թէ որքան սխալվում են նրանք, որոնք աշխատում են մեղցնել մատաղ սերնդի մէջ բնական ցանկութիւնները, գլխաւորապէս սերոյ զգացումը, որը որքան էլ ճշգիւ, բայց միշտ առիթ կը գտնի իր ոյժը ցոյց տալու: Թարգմանութեան լեզուն բաւական աղող է, թէ և ոչ աղատ դանաղան և անսովոր դարձուածներէր, ինչպէս, օրինակ, «ցցունազարդ», «վառված էր դէպի մենամարտը» և այլն: Գրքի գինն է 25 կո:

Այն ժամանակից, երբ ուսաց լեզուի գիտութիւնը պարտաւորիչ դարձաւ Ֆինլանդիայի բոլոր պաշտօնական անձանց համար, ասում է Նով. Վրեյա՝ լրագրից, Ֆինլանդական սենատի կարգադրութեամբ, զանազան հիմնարկութիւններում ծառայող պաշտօնեաները Ռուսաստան են ուղարկվում՝ ուսաց լեզուն գործնականապէս ուսումնասիրելու համար: Բացի դրանից, Հէլսինքիի համալսարանում ուսաց լեզուի ուսումնասիրութեան վրա առանձին ուղղորդութիւն է դարձրած:

Թաւրիզի մեր մի թղթակիցը շատ վատ գոյնելով է նկարագրում Արամեան դպրոցի հողաբարձութեան նախագահի գործունէութիւնը: Հողաբարձութեան նախագահը, ինչպէս երեւում է, մանկավարժական հարցերի մասին այնքան հակացողութիւն ունի, որքան բիւրական կենդանին նարնջի մասին: «Գալլոցի» տեսչին, — գրում է մեր թղթակիցը, — ամենատար խորհրդակցելով հեռացրին. լսելով զանազան հակադասութիւններ, հողաբարձութեան նախագահը, տեսուչ ընտրելիս, զեկավարվում է ոչ թէ նրա մանկավարժական արժանաւորութիւններով, այլ նրանով, թէ նա որ կուսակցութեան է պատկանում, ում կողմնակիցն է և ինչ կարծիք ունի իր մասին: Այդ հիման վրա նախագահը մերժեց այն տեսչացուին, որ թիֆլիսից առաջարկել էին այն մարդիկ, որոնց նոյն իսկ հողաբարձութիւնն էր դիմել: Այժմ դիմել են Շուշի և տեսչի պաշտօնի համար հրաւիրում են մի զաւամբալ ծերունու, որը երկար տարիներ վարժապետութիւն անելուց յետոյ, այժմ իր դողդոջն անդամներին հանգստութիւն է տալիս: Գա Գիւլագաբեանն է, որի անունը գուցէ յայտնի է իր մի քանի թարգմանութիւններով և որը եղել է ուսուցիչ Շուշու թեմական դպրոցում, և աղատ է կացուցվել իր դասերից իր ծերութեան պատճառով: Մենք զարմանում ենք, որ ծերունու ուսուցիչը չէ մերժում յանձն առնել մի այդպիսի պատասխանատու պաշտօն: Թղթակիցը իր նախաձեռնութեամբ է այս խօսքերով. «Նախագահը իրան մօտեցնում է վարձկան, հացկատակ մարդկանց, որոնք պատրաստ են ճշմարտութիւնը ծախել»:

Մեզ հաղորդում են, որ գործարանատէր Բոգարճեան իր բանուորներից մի քանիսին զրկել է տեղից: Ինչպէս յայտնի է, գործարանատէրի ոչ բանուորների մէջ համաձայնութիւն կայացաւ և բոլոր բանուորները, առանց բացառութեան, իրանց պաշտօնները ստացան գործարանի մէջ:

Դրանից յետոյ գործարանատէր Բոգարճեան անտեղի և անտակա կերպով լրագրիներում բանակալ սկսեց, որի մի ծայրը ուղղած էր նոյն իսկ բանուորներին. բանուորներն էլ իրանց կողմից պատասխանեցին, նորից յարաբերութիւնը լարվեց և գործարանատէրը իր վրէժը լուծեց՝ մի քանիսներին պաշտօնից զրկելով: Մենք ցուում ենք, որ անտեղի, անտակա բանակալ սկսելով մի քանի լրագրիների էջերում, գործարանատէրը նոր անախորժութիւնների առիթ է տալիս:

Մայրաքաղաքի լրագրիները լսել են, որ վրձնված է Սե ծովի ափին երկաթուղի կառուցանել: Երկաթուղին կը սկսվի Նսօրօսիսկից, կանցնի Սաշիով, Աղէրով, այդտեղից դէպի Գաղրի մարզը, Սուխում, Օլաշիլի—Աբխազիայի իշխանների աթոռանիստ տեղը, — Օլթօբայ և մինչև Գոթի—Թիֆլիսեան երկաթուղու Նսօլ-Սէնակ կայարանը: Ամբողջ ճանապարհի երկարութիւնը հաշւած է 295 վերստ, իսկ երկաթուղի շինելու արժողութիւնը կը լինի 17 միլիոն:

Պետական խորհրդին առաջարկված է մի նախագիծ, որով պէտք է անպատճառ ժառանգական մասն հանվի մեռած անձանց կաշքերից և տրվի ժառանգներին: Ինչպէս հաղորդում է «С.-Петербург.» լրագրից, մի կանոն է սահմանվում, որով մի որ և է կալուածքի տէրը պարտաւոր է ոչ միայն պահել և կրթել իր զաւակներին իր կենդանութեան ժամանակ, բայց և ապահովել նրանց իր ձեռքում գտնված կալուածքով, իր մահվան դէպքում: Ժառանգական մի յայտնի մասն է որոշվում, որ անցնում է երեխաներին, կայք ունեցողի ցանկութիւնից և կտակի բովանդակութիւնից անկախ:

ԷԶՄԱՆՆՈՒՄ մեզ գրում են. «Ճեմարանի տեսուչ Կոստանեան, բազմաթիվ խնդրատուներին շարաթնելով սպասել տալուց յետոյ, վերջապէս օգոստոսի 26-ին եկաւ Էջմիածին: Ուսուցչական խումբը կազմված է հետեւեալ անձերից՝ Կարապետ, Գեորգ, Տիգրան սարկաւազներ, ուսուցիչներ՝ Գարամեան, Սէթ Գարութիւնեան, Բերեբեան, Բաբեան, Գովհաննիսեան, Մելքումեան, Չորաբեան, Տէր-Գաբրիէլեան, Տէր-Միքայէլեան և մի երկու ուրիշներ, որոնք մեզ յայտնի չեն: Մինչև այժմ դեռ ևս ուսուցիչներ չը կան, պէտք է զան օգոստոսի 29-ին: Ե՛րբ կը սկսվեն ընդունելութիւնները՝ յայտնի չէ: Ուսումը հազիւ հոկտեմբերի սկզբին սկսվի»:

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎՈՒՄ, Ե. Նախագետեան խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Խնդրում եմ ձեր լրագրի մօտակայ համարներից մէկում հաղորդել, որ «Մշակի» № 95-ում Ալեքսանդրովի զարգացական գործերի մասին տպած թղթակցութիւնը իմ գրածը չէ: Տպագրելով այդ երկտողը, չենք կարող չը նկատել, որ ուրեմն Ալեքսանդրովում դեռ այն աստիճան տիրապետում է թղթակցիներին անհաւորութիւններին հետամուտ լինելու վայրենի սովորութիւնը, որ անմեղ, գործին անտեղեկ մարդիկ ստիպված են հերքումներ գրել, իրանց անձը հալածանքից ազատ պահելու համար: Այդ տեսակ վարմունքը պատիւ չէ բերում օրինաւոր հասարակութեան»:

ԹԵՕԴՈՍԻԱՅԻՑ մեզ գրում են. «Ով կամենում է բաւարանաք սովորել, շատ խօսել և ոչինչ չանել, և վերջապէս ով կամենում է զբաղւորութեան մէջ վարժվել, թող գալ Թէօդոսիա: Ամեն օր կարելի է տեսնել պարապ և անգործ մարդիկ, նստած սրճարաններում, առաւօտից մինչև երեկոյ մտածում են սուտ լուրեր ստեղծել մի որ և է անձի մասին և իսկոյն այդ սրճարաններից էլ կտրական արագութեամբ տարածել ամբողջ քաղաքի մէջ: Նշանակվում է ժողով պաշտօնապէս յայտարարվում է ձևականներին ներկայ լինելու հայոց միջառեսան երկսեռ ուսումնասիրող համար հողաբարձուներ ընտրելու, հասնում է նշանակված օրը և ժամը. — սակայն մեր աղաներն ու սրճատան անդամները չեն բարեհաճում պատել ժողովը իրանց ներկայութեամբ, հողաբարձուներ ընտրելու և ուսումնասիրող կարեւոր խնդիրներին լուծումն տալու: Նրանք միայն գիտեն մեզ անկիւններից մեծ մեծ խօսել և ոչինչ չանել, բամբասել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Նորբերս հեռագիրը հաղորդեց, որ Աթէնքում հրատարակվող յունական «Ակրոպոլիս» լրագրի խմբագրութեան վրա յարձակում գործեց զինուորականների մի խումբ և ջարդ ու փշուր արեց ամեն բան «Ակրոպոլիս» լրագիրը Յունաստանի ամենամեծ և ազդեցիկ լրագիրներից մէկն է։ Այդ ջարդի մանրամասնութիւնները «Times» լրագրի Աթէնքի թղթակիցը հետեւեալ կերպով է նկարագրում։

Երէկ, օգոստոսի 20-ին, (սեպտեմբերի 2-ին) «Ակրոպոլիս» լրագրի խմբագրութիւնը մի անսպասելի յարձակման ենթարկվեց։ Աթէնքի բերդապահ զօրքի օֆիցէրները, թուով 150 հոգի, ատրճառակներով և կացիներով զինաւորված, զինւորների ուղեկցութեամբ, գնացին խմբագրութիւն և կատարեալ ջարդի ենթարկեցին ամեն բան։ Կահարախի, գրքերը, թղթերը և այլն, մի խօսքով ամեն բան ջարդեցին, փշտեցին և ապա տպարանում կտրտեցին մեքենաները։ Կատարած զինուորները ապա մտան մինչև անգամ խմբագրի և կառավարչի մասնաւոր բնակարանները և այնտեղ ևս ամեն բան ոչնչացրին և քանդեցին։ Խմբագրի ինքն այդ ժամանակ տանը չէր, նա Անտվերպէնում էր, իսկ նրա ընտանիքը գտնվում էր Կէֆիսիում։ Խմբագրութեան շինութեան մէջ միայն չորս հոգի կային ծառայողները։ Զինուորականների անկարգութիւնները մօտ չորս ժամ շարունակվեցին, ոստիկանութիւնը ուշ հասաւ, երբ օֆիցէրները և զինուորներն արդէն ամեն բան վերջացրել էին, և ապա գնացել էին զինւորական կուրքը։

Այդ տարրինակ յարձակման պատճառը, ինչպէս պատմում են, «Ակրոպոլիսում» տպված այն յօդուածներն էին, որոնց մէջ լրագիրը բաւական յարգանքով չէր խօսում զօրքի մասին և դատապարտում էր օֆիցէրներին վարմունքը։ Ասում են, որ յարձակումը առաջուց արդէն վճռված էր օֆիցէրների կողմից, Աթէնքում։ Խմբագրութեան վնասները հաշուած են 200.000 դրամով։

Յանցաւորները ներկայումս կայանաւորված են և կառավարութիւնը ամենակարգական կերպով յայտնեց, թէ ինքն զիտաւորութիւն ունի վերջիններս զինւորականների ապօրինի վարմունքին և անկարգութիւններին։ Ամբողջ քաղաքը յուզման մէջ է և բնակիչները սաստիկ դժգոհ են օֆիցէրներից և պահանջում են, որ ներքին պատժեն։ Սակայն մամուլի կարծիքը ներկայ դէպքում միանման չէ։ Դէլիանիսի լրագիրները երկուդից, թէ զօրքին չաղբորթելու ցանկութիւնով արդարացիութեամբ օֆիցէրներին վարմունքը, իսկ միւս լրագիրները դատապարտում են, ասելով, որ մի այդպիսի վարմունք ստուեր է զոյում յունաց ամբողջ զօրքի վրա։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄԻՑ

Կ. Պոլիս, օգոստոսի 25-ին

Վերջապէս երկնային նախկին պառնոտախօս առաջնորդը, Հմայեակ եպիսկոպոսը, տեղապահ է։ Ինքնին այդ պաշտօնը մեծ բան մը չէ. տեղապահը պարտաւոր է աղբային ժողով գումարել և նոր պատրիարքի ընտրութիւնը կատարել տալ, ոչ ասելի և ոչ պակաս։ Սակայն ինչդերև հոն էր որ պիտի կարենայ նորընտիր տեղապահը իր պաշտօնը ճշգրտութեամբ կատարել։ Իրողութիւնները հակառակը կը հաստատեն։

Առաջին անգամ իսկ, երբ պալատ ներկայացաւ իր շնորհակալութիւնն յայտնելու իր նոր պաշտօնին մէջ հաստատուելուն համար, անմտութիւն ունեցաւ պալատականներու կարծիքն իմացելու աղբային ժողովի գումարման մասին. իրեն պատասխանեցին, թէ այդ ինչդեր մասին պէտք է զիմի արդարադատութեան գործոց նախարարին և անոր հետ բանակցել։ Հարցն ալ, պատասխան ալ աւելորդ, քանի որ տեղապահական պաշտօնը կենթադրէ, ըստ սահմանադրութեան, միայն և միայն ստիպողական պարտաւորութիւն մը ազգային ժողովը գումարելու և պատրիարքը ընտրել տալու։ Տեղապահին կը մնար միայն հարցնել արդարադատութեան գործոց նախարարին, թէ ո՞ր օրը պէտք է գումարել աղբային ժողովը, և ոչ թէ ինչդեր ներքեւ ձգել նոյն իսկ գումարը։

մարումը։ Տեղապահին զիմի, ուրեմն, հակօրինակն է և կապացուցանէ պարզապէս անոր պիկարութիւնը և որոշ շրջանակներու հասոյ ըլլալու ձգտումը։

Եւ արդարեւ, հետագայ դէպքերն աւելի պարզեցին անոր վարմունքը։ Կառավարութիւնը պահանջեց իրմէն հրաւիրել մայրաքաղաքին բոլոր եպիսկոպոսները և անոնցմէ հաւատարմական զգացմունքի հաւատարմութիւն ու խոստումներ ստանալ, որովհետեւ, իբր թէ, կառավարութեան կարծիքով եպիսկոպոսներն անխառն չեն ժողովրդի մէջ կատարված և կատարուելու վրա եղող գաղտնի խլրտումներուն։ Անոնց այս խոստումները կառավարութեան համար հաւատարմութեան գրաւական պիտի համարուէին և բովանդակ ազգի վերաբերութեամբ։ Հրաւիրած եպիսկոպոսներէն ոմանք միայն անձամբ պատասխանեցին, իսկ ուրիշները չեկան։ Ներկայ եղողներն յայտարարեցին, թէ ոչ մի պատասխան կրնան տալ իրենք, քանի որ շատ չատեր քաղաքակարգ են այդ նստէն։ Այս միջադէպն ալ այսպէս փակուեցաւ։

Անցեալ ուրբաթ օրը, օգոստոսի 19-ին, սուրբ թանի գահակալութեան տարեդարձին առթիւ, ըստ սովորութեան, հպատակ ազգերու հոգեւոր ներկայացուցիչները պալատ գնացին՝ իրենց շնորհաւորութիւնները անձամբ մատուցանելու սուրբ թանին։ Ինչպէս ատենական տեղերու մէջ, նմանապէս հանդիսական ամեն պարագաներու մէջ ընդունված և հաստատված սովորութիւն է՝ առաջին տեղը տալ յունաց պատրիարքին, երկրորդը՝ հայոց, երրորդը՝ հրէաներու ռաբբինապետի տեղակալին, չորրորդը՝ բողոքականներու ազգապետին և այլն։

Հայ-կաթոլիկներու կաթողիկոսը, Ալքսանդր, որուն համար բնաւ դժուարին չունի ազգային համերաշխութեան գաղափարը, և որը իր անսխառնութեան համար, եթէ կարենար զգալ մը ջուրի մէջ կը խեղդէր հայոց եկեղեցին, հայ ժողովրդի մեծամասնութեան կրօնական հաստատութիւնը, հանգամանքէ օգտուել կը փութայ և արարողապետ Միւնիի փաշայի հետ համաձայնելով, յունաց պատրիարքէ անմիջապէս ետքը կը ներկայանայ սուլթանին։ Այս արարմունքը կատարելապէս լրբութիւն է անոր կողմէն և օրէնքի գաղափարը բացակայութիւն Միւնիի-փաշայի կողմէն։ Վերջինս, ի նկատ աւելելով, որ Հմայեակ եպիսկոպոս տեղապահ է և ոչ պատրիարք, թոյլ տուեր է այդ բանը։ Սակայն ինչդերն այն է, որ ոչ թէ անձեռն են, որ կը ներկայանան, այլ ժողովրդի ներկայացուցիչները։ Իսկ այդ կարգը սահմանուած է ոչ եկեղեցիներու հնութեան և ոչ ալ ուրիշ կրօնական նշանակաւոր մը վրա, այլ ըսկ հպատակ ազգի ունեցած կարեւորութեան վրա, Կ. Պոլիսը առնուած միջոցին։

Եթէ ինչդեր կրօնական բնաւորութիւն մը ունենար՝ ռաբբինապետի տեղակալը առաջին տեղը պիտի բռնէր, իրեն հնագոյն կրօնի մը ներկայացուցիչը, եթէ նուիրապետական կարգն ի նկատ առնուէր, բողոքականներու ազգապետը ռաբբինապետի տեղակալէն առաջ պիտի ներկայանար, քանի որ մէկը տեղակալ է, մինչ միւսը բողոքական հասարակութեան բարձրագոյն հոգեւոր պաշտօնեան։

Ուրիշ առթիւ ևս այս ինչդեր մեկնուած է. այսպէս՝ երբ Օրմանեան, տակաւին վարդապետ, կարնին առաջնորդ եղաւ, տեղացի կաթոլիկ եպիսկոպոսը ինչդեր յարցոյ, թէ միթէ հայոց առաջնորդը, որ վարդապետ է, կաթոլիկներու եպիսկոպոս առաջնորդէ՞ն բարձր պիտի նստի Կարնին չիտաքէ մէջլիսին՝ մէջ։ Կառավարութիւնը պատասխանեց իրեն, թէ ինքը վարդապետ, եպիսկոպոս չի ճանչնար, այլ հայոց կամ կաթոլիկներու ներկայացուցիչներ։

Խնդիրը ուրեմն վէճ չի վերցնել, և Հմայեակ արքայան ոչ միայն այդ զիտեհանու էր, այլ և ինչեկն էր 1868 թվին նոյնաման դէպքը։ Հասուն, ֆրանսական հոգի դեպքանի պաշտպանութեամբ, ուղեց նոյն խաղը խաղալ ժամանակի տեղապահ Արիստակէս եպիսկոպոսին. բայց բարեմիտ ծնունդին, Նարեկի զրդւումով, վեղարը զուլը դրաւ ի դուրս ելաւ, բողոքելով այդ բանին դէմ։ Եւ իրաւունք տրուեցաւ իրեն, այնպիսի ատեն մը, երբ այնքան ազդեցութիւն ունէր ֆրանսական դեսպանը։ Հմայեակ եպիսկոպոս չունեցաւ այդ քաջութիւնը և տիմար կերպով գնաց կանգնեցաւ Ալքսանդրեան վար, որ այդ միջոցին ճշուած ճառ մը կարդաց։ Սուլթանը հանցաւ միայն ըսել

Հմայեակին, «Իմ բարեկերպ հաղորդէ հասարակութեանը» (և ոչ ազգիդ, ինչպէս առաջ կըսուէր)։ Հմայեակ եպիսկոպոսը ոչ միայն այդ վարմունքով անձնական իրաւունքներուն դաւեց, այլ և մեծ առիթ մը փախցուց ժողովրդականութիւն վստակելու. այս վերջինը բաւական ցաւ պիտի պատճառէ իր խեղճուկ, փառամոլ սրտին։ ***

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Քանարական, օգոստոսի 16-ին

Այսօրվայ պօստն ընդհանուր ուրախութիւն պատճառեց ամբողջ Պարսկաստանի վաճառականներին, ինչպէս և Քանարականի հայ և պարսիկ վաճառականներին։ Մի կողմից հեռագիրը, միւս կողմից նամակներն աւետեցին, որ զաւանթի մուտքը, բարձրագոյն թոյլատուութեամբ, ազատ է դէպի Ռուսաստան։

Ամբողջ 6—8 ամիս զաւանթի մուտքը ռուսաց կառավարութեան կողմից արգելված լինելով դէպի Ռուսաստան, մեծ վնաս պատճառեց Պարսկաստանի վաճառականութեանը։

Իւրաքանչիւր տարի վաճառականը կարողանում էր տօնավաճառ գնալ և այդպիսով վերցնում էր իր հետ մի քանի հաղար թումանի փոխանակազիր, կամ զաւանթ տանում էր Բագու ու ռուսաց փողի փոխարինում և այդպիսով գնում տօնավաճառ՝ առնուել անելու։

Բայց քանի որ այս տարի վաճառականը զաւանթ տանելու իրաւունք չունէր և զաւանթ արժէքը օրից օր ընկնում էր, այդ պատճառով գնացողներ թիւ թիւ սովորականից քիչ էր։ Եւ հէնց այդ պատճառով շատ քիչ ապրանք էր ներմուծվում Պարսկաստան։

Այն ապրանքը, որն առաջ արժէր 1 զաւանթ, այժմ 1 1/2 զաւանթ արժէ կուրսի շնորհիւ, իսկ պարսկաստանացու համար մի և նոյնն է մնում. նա սովոր է գնել մի զաւանթով, ուստի և այսօր դժուարանում է կէս զաւանթ աւել վճարել։ Նա չէ հաշուում, որ զաւանթ ռուսաց թղթադրամի վերածելով, արժէքը շատ պակասում է, միմիայն նրա ընդհանուր հայեցողութիւնը կենտրոնանում է այն բանի վրա, որ իր երկրում զաւանթ զաւանթ է մնում և չէ փոփոխվում։ Իսկ վաճառականի համար մի և նոյնը չէ մնում. նա այսօր մի արժէքով է գնում, վաղն ուրիշ վաճառականի բերած ապրանքը տարինեով դարձած կը մնայ ու կը փչանայ, չը նորիւ այդքան մեծ գնահատութեան։ Եւ ասա այդ պատճառով, նա այլ ևս չէ յօժարվում գնալ Ռուսաստան՝ ապրանք գնելու, մինչդեռ վնասով պէտք է վաճառէ։ Ղաւանթ աղատ ժամանակը մեծ քանակութեամբ մանուֆակտուրայի ապրանք էր գալիս, այն ինչ այժմ շատ քիչ։

Բամբակի հոնձը այս տարի շատ առատ բերք է խոստանում, զետեղեց բաւական բարձրացած է և կոկոնը ամբողջ, այնպէս որ այլ ևս վտանգ չէ սպառնում, և մինչև մի ամիս ու կէսը՝ նոր բերքը կը ստացվի։ Նոյնպէս և ճուշմութի ու ցորենի հոնձը շատ բաւարար է։

Կանաչ բամբակ ծախելու սովորութիւնը վաղուց ի վեր արմատացած լինելով այստեղ, այսօր ևս գնում են մեծ քանակութեամբ կանաչ բամբակ, այսինքն 3—4 ամիս յետոյ ստանալու պայմանով կամ արժէք որոշած և կամ անորոշ թողնված։ Գնված բամբակի փողը տրվում է կանաչ վաճառ, ամբողջովին կամ կէսը։

Քանի որ ընդհանրապէս բամբակի վաճառքը, ինչպէս յիշեցինք, կատարվում է նախօրոք, երբ ապրանքը դեռ կանաչ բոյս է դաշտում, շատ յաճախ պատահում է, որ ժամանակին բերում են և տալիս են առնողին վատ ապրանք՝ խառնած լաւի հետ, և առնողն էլ, ի հարկէ, ճարտաստված պէտք է վերցնի, քանի որ կանխօրէն փող է վճարել։ Որպէս զի վերջ տրվի այդպիսի անարժէքութիւններ, Շահի հրամանով կազմված է մի յանձնաժողով, որի անդամների պարտաւորութիւնն է հսկել ամեն տեղ, որպէս զի սերտորոկ կեղտոտ բամբակ չը վաճառահանվի իսկ անուշադիր լինողը խիստ կը պատժվի։

Այս ամսի սկզբին եկել էր այստեղ յանձնաժողովի անդամներից մէկը, որը հաւաքելով հայ ու պարսիկ վաճառականներին, յայտնեց այդ բոլորը, և ինչդերք որ առանձին ուշադրութիւն դարձնելու բամբակի վրա, վատ, սերմոտ ապրանք բոլորովին չընդունեն և ինչ դժգոհութիւն որ ունենան ուղղակի իրան յայտեն, իսկ վատ բամբակն ուղ-

ղակի այրեն կամ ծովը թափեն։ Իսկապէս յանձնաժողովի նպատակը գտնվել է. ցանկանում ենք միմիայն, որ մի քանի թուման կաշառքը չը ոչնչացնի յանձնաժողովի ամբողջ կազմակերպութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Le Nord» լրագիրը հաղորդում է, որ Կ. Պոլիս ռուսաց դեսպանի խորհուրդների ազդեցութեան տակ, Բ. Ղուար մի շարք զիջումներ արաւ յունաց տիեզերական պատրիարքին, որոնցով երկու կողմերն էլ գոհ են մնացել։

— Մայրաքաղաքի «НОВОСТИ» լրագրի Կ. Պոլիսի թղթակիցը գրում է հետեւեալը. «Վերջին ժամանակներս սառնութեան նշաններ են երևում ռուս-թիւրքական յարաբերութիւնների մէջ։ Այդ սառնութեան պատճառն այն է, որ Թիւրքիան ինտրիգներ է լարում Բալքանայում, իսկ Ռուսաստանը պարբերաբար յիշեցնում է Թիւրքիային՝ պատերազմական վարձատրութիւն տալ ռուս հրապատակներին և կառավարութեանը։ Երեքսեանեան դաշնակցութիւնը ճարպիկ կերպով աշխատում է սուր կերպարանք տալ այդ տարաձայնութիւններին, Սօֆիայի կառավարութեան օգնութեամբ։ Չը նայելով դրան, Կ. Պոլիսում նկատում են, որ Ռուսաստանը չէ կամենում Թիւրքիային լուրջ դժուարութիւններ պատճառել Հայաստանում և ըստ երեւոյթին շատ քիչ նշանակութիւն է տալիս գործերի դրութեանը Բալկանեան թերակղզում։»

— Հռոմից «Times» լրագրին հեռագրում են, որ գործերը Սիցիլիայում շատ լուրջ կերպարանք են առնում։ Գիւլաքցիների թշնամական զգացմունքները դէպի կալուածատէրերը գնալով առնում են։ Ասում են, որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի ամենապակաս միջոցներ ձեռք առնել՝ գիւլաքցիների յարաբերութիւնը կալուածատէրերի հետ աւելի կանոնաւոր դարձնելու համար։

— Պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ խօսքերն Գերմանիայում սպառնալի չափեր է առնում, մանաւանդ Գանցիգում։

— Ֆրանսիական բարձր սանիտարական խորհուրդը վճռել է ըննել և կարանտինի ենթարկել բոլոր նաւերը՝ Մարսէլից դուրս գալու ժամանակ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կօրէյացիները։ Կօրէյացիները, էսկիմոսներից յետոյ, ամենաշատակեր ժողովուրդն են աշխարհիս երեսին. նրանք խիստ շատ են ուսում և շատ էլ քնում են։ Նրանց ամենաարհաւ կերակուրը ջանիլ յան միսն է, իսկ սիրած խմիչքը եսպոնական գարեջուրն է, որը իսկապէս կարող է մրցել Վիէնայի և Միւնիխի գարեջրի հետ։ Որպէս և հետո արեւելքի բոլոր բնակիչները, Կօրէյացիները ձուկ չառ են ուսում. նրանց արգելված է կարտօֆիլ ունել։ Կօրէյում հիւրանոցներ չը կան, բայց կան հանգիստ առնելու տներ, որ ճանապարհորդը ինքն կարող է իր համար կերակուր եփել։ Կօրէյացիները շատ տպաւորվող մարդիկ են. Կօրէյացիներին մեծ մասը ուսում առած մարդիկ են, ուսումը, որպէս և ջինսաստանում, աւելի մեծ նշանակութիւն ունի, քան թէ հարստութիւնը և ծագումը։ Նրանք շատ են սիրում անասուններին և առանձին յարգանք են վայելում նրանց մօտ օձերը։ Ոչ մի Կօրէյացի երեք օձ չի սպանի։ Կոնֆուցիայի վարդապետութիւնը նրանց պետական կրօնն է համարվում։

Ներկայ տարին պատային վարչութիւնը յոյս ունի պարբերական հրատարակութիւնները ուղարկելու և տեղը հասցնելու համար մուտք ունենալ մօտ 1 միլիոն երեք հարիւր հազար ռուբլի։ 1893 թվին պատային վարչութիւնը ստացել էր 1,169,423 ռուբլի։

Շոգեկաթմանները նախով տաքացնելու բազմամեայ պրակտիկան յոյց է տալիս, որ հեղուկ վառելիքը, այսինքն նախ, թէ իր էֆանութեամբ և թէ իր յարմարութեամբ աւելի լաւ է ուրիշ վառելիքներից։ Այժմ ծովային մեծ խաւարութիւնը, մայրաքաղաքի լրագիրների խօսքերով, վճռել է նաւատորմի շոգեկաթմանի համար, իբր վառելիք, նախ գործածել։

Կիէվի, Վարշավայի և Օդեսայի արդիւնաբերողները մի նաւ վարձեցին, լցրին ռուսաց դանապան ապրանքներով և ուղարկեցին Սպանիայի, Իտալիայի և Պորտուգալիայի, նոյնպէս և հիւսիսային և հարաւային Ամէրիկայի նաւահանգիստները՝ օտարեկրացի սպառողներին ռուսաց ապ-

բանքների հետ ծանոթացնելու համար: Ուստի
այսպիսիները ծանոթությունները խոսքերով
չօգտվելու կը վերջին արտասանմանն ապրանք-
ներ և կը վերադառնայ Օգոստոս:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏՐՈՎՈՒԳ, 31 օգոստոսի: Հրատարակված
է, որ Նորին Մեծութիւնը ձեռք է բերում, որ-
պէս անձնական սեփականութիւն, Մեծ Իշխան
Դիմիտրի Կոնստանտինովիչին՝ պատկանող «Օրէան-
դա» կառուածքը, և որ 1896 թիւն կը գումարվի
Բիզանտինական տարրերը հնագիտական ժողովը:

ԼՕՆԴՈՆ, 31 օգոստոսի: Որովհետեւ եւապոն-
ական լրագրողները խիստ ցենզուրային են ենթարկ-
վում և օտար թղթակիցներին չէ թոյլ տրվում
ներկայ լինել զինուորական գործողութիւնների
տեղերում, չինա-եւապոնական պատերազմի մա-
սին տեղեկութիւններ տալ անհնարին է. մաս-
նաւոր հետազոտական և պատասխան թղթակցութիւնը
եւապոնական իշխանութեան քննութեան է են-
թարկվում: Կայսրի խորհուրդը գնալը նշանակ-
ված է հինգշաբթի:

ՁԱՆՁԻՐԱՐ, 31 օգոստոսի: Կիւմով տեղի աղ-
գարնակութիւնը, արեւելեան Աֆրիկայում, ապրա-
տարկելով գերմանական կառավարութեան դէմ,
թուով 2000 մարդ, անցնել ուրբաթ յարձակվեց
տեղական նահանգապետի տան վրա: Երկու ժամ
տեղի կռոււմ ապստամբողներին սպանվեցին 100
մարդիկ. գերմանացիները կորուստը աննշան է:

ԼՕՆԴՈՆ, 1 սեպտեմբեր: Այսօրւմ ստորագրվեց
Կորէի և Եւապոնիայի դաշնակցութեան վերաբե-
րեալ պայմանագիրը՝ Կորէին անկախութիւն տա-
լու և չինական զօրքերը Կորէից հեռացնելու նպա-
տակով: Եւապոնիան յանձն է առնում պատերազմա-
կան գործողութիւնները Չինաստանի դէմ: Կորէ-
յան օգնում է եւապոնական զօրքերին: Կիւմով
կապված է պատերազմի ժամանակ Չինաստանի
և Եւապոնիայի մէջ:

ՊԵՏՐՈՎՈՒԳ, սեպտեմբերի 1-ին: Երկրորդ ներ-
քին փոխառութեան տոմսերի խաղարկութեան
ժամանակ զլիստոր դուանները տարան հետեւեալ
տոմսերը:

№ սերիայի	№ տոմսի	Գումարը	№ սերիայի	№ տոմսի	Գու- մարը
14,388	44	200,000	9,205	13	ն
8,752	45	75,000	17,835	3	
7,441	7	40,000	12,144	26	ն
14,547	23	25,000	13,459	26	
12,182	18	10,000	14,122	14	ն
16,305	31	10,000	11,348	35	
12,709	40	10,000	2,109	29	ն
15,586	26	8,000-ական	4,594	19	
10,076	28		3,912	16	ն
3,201	18	5,000-ական	1,407	26	
4,149	26		12,021	13	ն
11,885	42	5,000-ական	2,964	45	
7,358	36		17,104	33	ն
1,996	47	5,000-ական	6,378	31	
19,241	9		8,154	29	ն
4,994	7	5,000-ական	10,597	7	
17,740	40		16,277	41	ն
11,790	2	5,000-ական	6,214	22	
376	32		13,570	45	ն
15,832	32		11,050	47	

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔԱՆԱՐԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ

ՀԻՄՆԱԿԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուլիա, վարձուցով արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի
կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբու-
ժութեան և վերնաբան (սիֆիլիս) հիւանդու-
թիւնների:

Դ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեար-
դային:

Կ. Գ. ՐՈՒԳԻՆՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երե-
կանների և կանանց:

Ա. Գ. ԳՈՐԴՈ—1—1½ ժ. ականջի, կոկորդի,
և քթի:

Կլինիկի ՏՈՒՐԿՈՎԻ—12½—1 ժ. կանանց ց.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երե-
կանց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ա. Գ. ԳՈՐԴՈ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէղի ու
սեռական օրգանների:

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՅԻՄԵՆՈՎԻ—7—7½ ժ. ականջի, կոկորդի

և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբ-
թի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՐԴՈ քիմիական և խոշորացուցական
հետազոտութիւններ է անում մէղի, խիւի, ա-
րեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) 7
օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցումը
ընդունվում են և ԳԻՇԵՐՈՒԿ ՀԻՄՆԱԿԱՆՈՑ:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
ժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ: (№ 72)

Թարգմանած պատրաստ ունեմ Տուրգե-
նովի «ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ»

(Стихотворения въ прозе) աշխատութիւնը
ամբողջովին, թուով 50 բանաստեղծութիւն,
որը այս օրերս կը յանձնվի մամուլին:

Ա. Ծատուրեան
(№ 99) 2—3


Հ. ԱԽՏԻՔ ԿՈՅԼԱԻ
ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ
ԲԱՌԳԻՐԲԸ

1667 էջ. գինը 10 ռ.

Ծախվում է 5 ռուբլիով, խոգալէրդեանի
մագաղիտում, Գօշովինսկի պրօպէլէտի վրա:

(№ 91) 6—10


ԱՄԵՆԱՅԱՑՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ




ՐՕՅԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՅԻՄ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ: ԿԻ-
ՐՈՒՄՆԵՐ, ՖԻԼԵՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՐՆԵՐ, ՁԱՅՆԱ-
ԽԱՅՆԵՐ, ԼԱՐՆԵՐ ԵՒ ՍՅՆԵՐ ԵՒ ՍՅՆԵՐ:



Բոլոր տեսակ գործիքների համար գի-
նը կարելի է վճարել մաս-մաս:

ՆՈՐ-ՊՐԵՏՎԱԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽ-
ՅՆԻ ԿՈՎԱՅԱՑՆԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԴԷՊՈ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար կայսերական խոշորական
լինկերութեան

Тифлисъ, Музыкальное депо Б. М. Мира-
мидана, Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.

(№ 35) 12—20

Ծախվում է Կովկասի բոլոր քաղաքների
հայ-գրադաճառանոցներում

ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

ԱՄԱՍՏ վէպը, բարձր հայոց իրական
կեանքից—2 ռ.

Խեի ԿԱՐԱՊԵՏ վէպը, թիւրքահայերի
կեանքից—1 ռ.

ՇՈՒՆԱՆ օղբերգ. օպերայի համար—1 ռ.

ՍԱՐԲԱՑ օղբերգ. թիւրքահայերի պատ-
մական կեանքից 30 կոպ.

(№ 81) 5—5

ԳԵՐՈՐ ԱՐՈՎԱՆԻ
«ՀԱՄԱՌՈՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՋԳԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»

գիրքը՝ չորրորդ տպագրութեամբ լոյս տե-
սւաւ և վաճառվում է պակասեցրած գնով
կղբ. Արովանյանի թղթալաճառանոցում:
գինն է 40 կոպ., զուամբով գնողներին գի-
շումն կը լինի: (№ 98) 4—10

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ

Վ. Ի. ՏԵՐ-ՅՈՎԱՍԷՓԵԱՆԻ

(Սօյալի, Սաղովայա, Սերգիևսկայա փողոց ՏԵՐ-ՄԷԼԵՍԻՍՈՎԻ տան հանդէպ, № 46)

Կովկասեան Ոստիմարանական Երջանի պ. Հոգաբարձուի թոյլտուութեամբ, այս տարվայ սեպ-
տեմբերի 3-ից բացվում է դպրոց պանսիոնով (տղաների համար): Դպրոցում ընդունվում են երկ-
սեռ մանուկներ՝ պատրաստելու համար նրանց մտնելու կառավարչական միջնակարգ դպրոցները:

Պայմանների մասին հարցնել պանսիոնում:
(№ 100) 1—5

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ելալուում է ընդհանուրի գիտութեան, որ այս օգոստոսի 30-ից տեղափոխվում է նոր
բնակարան, երեւանեան հրապարակի վրա, գեներալ ՏԵՐ-ԱՍԱՏՈՒՐՈՎԻ նախկին տունը,
որտեղ առաջ Թիֆլիսի նահանգական ատենան էր գտնվում: (№ 98) 2—3

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻՆԱՆՁԱՆՑՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթու-
թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով
հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկայք արանք են՝ 1) Առևտրական հաշուութիւն, 2) Առևտ-
րական թուարանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-
յին), 4) Թուարանութիւն համարիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6)

Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղարվեստութիւն, վատ ձեռքի
ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի
1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյան 4-ից մինչև
8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօյալիում, Ալեքսանդր Փրիզոսովի

տանը, № 9, Սերգիևսկայա և Նազարյան փողոցների անկիւնում: Ծրարիւր և
կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովանոյեանի բանկային
գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում
են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

№ 62 26—32

Ազգիս վեհափառ Հայրապետ հրամայել է գործադրել հայկական դպրոցներու,
որպէս ձեւանարի, իմ աշխատասիրած

«ՀԱՄԱՌՈՑ ԳՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱ-
ԳԻՐՔԸ»:

Յայտնելով այս ի դիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում եմ ցանկացողներին
առ այժմ դիմել ուղղակի մեզ այս հասցեով. ԹԻՖԼԻՍ, Նիկոլաևեան փողոց, տուն № 45:

Դիմել կազմած է և արժէ՝ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յի-
սուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) դպրոցական
վարչութեանց վկայված չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճա-
րել 40 կ.: ձանապարհաճախը գնողներին վրա է:

13—25 (№ 81) Սարգիս քահանայ Բէգնազարեանց

ՊԱՆՍԻՈՆ ՏԵՐ-ՅՈՎԱՍԷՓԵԱՆԻ

1894/5 դպրոցական տարում բաղկացած կը լինի երկու պատրաստական առաջին,
երկրորդ և երրորդ դասարաններից: Աշակերտները ընդունվում են երթեկներ, կիսա-
գիշերօթիկներ և զիշերօթիկներ և պատրաստվում են մտնելու կապիտալ գիմնազիա-
ների, բէլական ուսումնարանների, կադէտսկի կորպուսների, երկրաչափական դպրոցի
և ուրիշ կրթական հաստատութիւններին համապատասխան դասարանները:

Աշակերտների ընդունելութիւնը սկսված է: Ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ից:
Պայմանների մասին հարցնել պանսիոնում:

Սօյալի, Գանձակայա փողոց, № 11, սեփական տուն:

3—4 (№ 89)

ՈՒՍՈՒՑՈՒՆԻՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԱՐԱԿՉՈՒՆԻՆԵՐԻ ՓՈՒՍԴԱՐԾ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԵՐՈՒԹԵԱՆ

ԴՊՐՈՑԸ

ՏԵՐ-ԱՍԱՏՈՒՐՈՎԻ անից, որ զանվում է Ստարայա-Դնստիտուտայա փողոցի վրա, փո-
խարկվեց այն տունը, ուր առաջ գտնվում էր 3-դ գիմնազիան, վէլիամիսովայա փողո-
ցի վրա, (քաղաքային տան կողքին): Երկսեռ մանուկները տեղական նախապատրաստա-
կան բաժանմունքներում (հայոց և վրաց) ընդունվում են ոչ փոքր 6 տարեկանից,
իսկ ուսաց բաժանմունքում (ստորին և միջին) ոչ փոքր 7 տարեկանից: Ընդունելու-
թիւնը կը լինի օգոստոսի 22-ից (10-ից մինչև 12 ժամը առաւօտեան և 5-ից մինչև
6 ժամը երեկոյան): Ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ին:

Պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար:

(№ 99) 3—3

ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒՄԻ ԴԷՄ

Բժշկական դէպարտամէնտից թոյլա-
տրված

ՕԼԵԱԿՏՈՐԻՈՒՄ ՆՈՂԻ-
ԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿԻ
Ծախվում է 40 կոպէկով

Գեղազոլ ծական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլի-
սում: № 128 (91 թ.) 31—40